Թողարկման 20-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2013

Մարտ

թիվ 3 (175)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, մի շարք ՍՊԸ-ների և «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին՝ արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ, որոշ ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաներ, ինչպես նաև որոշ ՓԲԸ-ների «Բիստրայա Պոչտա» և «Յունիստրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՕՍՄՊ» ՍՊԸ-ի թիվ 5 և 9 լիցենզիաները, մի խումբ ՍՊԸ-ների արտարժույթի փոխանակման կետերին տրամադրված լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «Իդրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող ՍՊԸ-ի «Սիթի-Օհանով» մասնաճյուղը հաշվառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Գուդկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Դուշանբե» մասնաճյուղը գրանցումից հանելու և «Սեֆ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ-ի՝ «Երևան», «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի՝ «Գորիս», «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի «Վայք» մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 2 ՓԲԸ-ների, 3 ՍՊԸ-ների, 3 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 1 գրավատան, 1 արտարժույթի փոխանակման կետի, 4 ՓԲԸ-ների նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 41Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի որոշ աշխատակիցներին ղեկավար համարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 1 պաշտոնական պարզաբանումը «ԱՊՊԱ պատահարի գծով ապահովագրական հատուցման դիմում ներկայացնելու ժամկետի վերաբերյալ»

11 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 64Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Ամիկուս», «Խաչատուր Պետրոսյան» սահմանափակ պատասխանատվությամբ և «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 45Ա, 57Ա, 56Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիաներ են տրամադրվել*** «Մաժոր Կրեդիտ» և «Միկրո Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 46Ա, 59Ա):
- ***«Բիստրայա Պոչտա» և «Յունիստրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Արցախբանկ» և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 49Ա, 60Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ՕՍՄՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դրամական փոխանցումների իրականացման և վճարային գործիքների ու վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի ու քլիրինգի կազմակերպման թիվ 5 և 9 լիցենզիաները (որոշում թիվ 51Ա):
- ***Դադարեցվել է*** «Իդրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սիթի-Օհանով» մասնաճյուղը (որոշում թիվ 55Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Արգիճի Տուր», «Գարի Գրուպ», «Ժակ Ժան», «Լաբեան», «Մելբրո», «Շիրակ հանրախանութ», «Սուփրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև «Մսագործ» առևտրային կոոպերատիվի արտարժույթի փոխանակման կետերին տրամադրված լիցենզիաները (որոշումներ թիվ 66Ա, 70Ա-73Ա, 78Ա, 79Ա, 74Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Գուդկրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Դուշանբե» մասնաճյուղը (որոշում թիվ 1/160Ա):
- ***Գրանցվել են*** «Սեֆ Ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերության համապատասխանաբար «Երևան», «Գորիս» և «Վայք» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/187Ա, 1/216Ա, 1/245Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 փակ բաժնետիրական, 3 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 3 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 3330000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/159Ա, 1/222Ա, 1/210Ա, 1/219Ա, 1/234Ա, 1/202Ա-1/204Ա) և 1 գրավատան, 1 արտարժույթի փոխանակման կետի, 4 փակ բաժնետիրական ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/209Ա, 1/240Ա, 1/219Ա, 1/221Ա, 1/241Ա, 1/239Ա):

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի որոշ աշխատակիցներին դեկավար համարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում արժեթղթերով, արտարժույթով, ածանցյալ գործիքներով կամ դրամական շուկայի գործիքներով առքի, վաճառքի կամ փոխանակման գործառույթներ իրականացնելու վերաբերյալ որոշում կայացնող անձանց որակավորման մակարդակը և մասնագիտական պատրաստվածությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 146-Ն որոշմամբ հաստատված «Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ բանկի գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում ազդեցություն ունեցող աշխատակիցներին բանկի ղեկավար համարելու ուղեցույցի» 3-րդ կետի 3.6 ենթակետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի դիլերներին համարել բանկի ղեկավար: Սույն որոշման իմաստով դիլեր են համարվում բանկի այն աշխատակիցները, ովքեր որոշում են արտարժույթի, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի առքի, վաճառքի կամ փոխանակման կամ ռեպո գործարքների կնքման պայմանները (այդ թվում՝ գին, ծավալ, քանակ, տոկոսադրույք, կնքման, կատարման, մարման և այլ ժամկետներ և (կամ) այլ պայմաններ):

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգ 1-ի 4-րդ կետը.

ա. «ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,» բառերից հետո լրացնել «դիլեր(ներ)ը,» բառով,

բ. լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում, դիլեր են համարվում բանկի այն աշխատակիցները, ովքեր որոշում են արտարժույթի, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի առքի, վաճառքի կամ փոխանակման, կամ ռեպո գործարքների կնքման պայմանները (այդ թվում՝ գին, ծավալ, քանակ, տոկոսադրույք, կնքման, կատարման, մարման և այլ ժամկետներ և/կամ այլ պայմաններ):»:

2) Կանոնակարգ 1-ի 10.3 գլխի վերնագիրը «բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի» բառերից հետո լրացնել «, դիլերների» բառով:

3) Կանոնակարգ 1-ը լրացնել 68.1, 68.2, 68.3, 68.4, 68.5, 68.6 և 68.7 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«68.1. Սույն կանոնակարգի 56-68-րդ կետերը չեն տարածվում սույն կանոնակարգի 4-րդ կետով նախատեսված դիլերների նկատմամբ, եթե սույն գլխով դա ուղղակիորեն նախատեսված չէ: Սույն կանոնակարգի 4-րդ կետով նախատեսված դիլերները պետք է ունենան բարձրագույն կրթություն և Կենտրոնական բանկի կողմից տրամադրված դիլերի որակավորման վկայական: Ընդ որում, սույն կանոնակարգի 4-րդ կետով նախատեսված դիլերի գործառույթներ իրականացնող բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի, բանկի գործա-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. փետրվարի 19-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.03.2013 թ. (ՀՀԳՏ N8 (452)[1], 15.03.2013):

դիր տնօրենի տեղակալի (բանկի տնօրենության (վարչության) անդամների) համար դիլերի որակավորման վկայական չի պահանջվում: Դիլերի որակավորման վկայականը տրամադրվում է.

1) Սիէֆէյ որակավորված ֆինանսական վերլուծաբանի (CFA - Chartered Financial Analyst) քննության առնվազն առաջին մակարդակը հանձնած լինելու փաստը հավաստող փաստաթղթի հիման վրա, կամ
2) էյՍիԱյ – Ֆինանսական շուկաների միության (ACI – The Financial Markets Association) էյՍիԱյ դիլինգի վկայականի (ACI Dealing Certificate) (այսուհետ՝ էյՍիԱյ վկայական) հիման վրա, որը տրամադրվել է բացառապես սույն Կանոնակարգի 68.2 կետի համապատասխան:

68.2. էյՍիԱյ վկայական ստանալու համար քննություն հանձնելու պայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի կողմից:

68.3. Դիլերի որակավորման վկայական ստանալու համար բանկը CBANet համակարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում դիլերի որակավորման վկայական ստանալու մասին դիմում՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

1) Դիլերի թեկնածուի հայտարարագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի ենթահավելված 38-ի,
2) Դիլերի թեկնածուի անձնագրի պատճենը,
3) Սույն կանոնակարգի 68.1 կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթի պատճենը,
4) Հանրային ծառայության համարանիշը կամ հրաժարվելու մասին տեղեկանքի համարը (համարները):

68.4. Դիլերի որակավորման վկայականը տրամադրվում է անժամկետ՝ սույն կանոնակարգի 68.3 կետով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 15 օրվա ընթացքում:

68.5. Կենտրոնական բանկը կարող է մերժել դիլերի որակավորման վկայականի տրամադրումը, եթե դիլերի որակավորման վկայական ստանալու համար դիմած անձը նախորդ երեք տարիների ընթացքում զրկվել է որակավորման վկայականից, կամ սույն Կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են թերի կամ ոչ ամբողջությամբ:

68.6. Դիլերի որակավորման վկայականի կորստի դեպքում դրա կրկնօրինակը տրամադրվում է սույն կանոնակարգի 68-րդ կետով նախատեսված կարգով:

68.7. Բանկի դիլերների փոփոխության դեպքում բանկը այդ փոփոխությունից հետո Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով նախատեսված առաջիկա շաբաթական հաշվետվության հետ միաժամանակ Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև բանկի դիլերների փոփոխության վերաբերյալ տեղեկությունները, որոնք առնվազն ներառում են.

1) Դիլերի անձնագրային տվյալները,
2) Հանրային ծառայության համարանիշը կամ հրաժարվելու մասին տեղեկանքի համարը (համարները),
3) Դիլերի որակավորման վկայականի համարը և տրման ամսաթիվը,
4) Դիլերի աշխատանքից ազատվելու կամ աշխատանքի անցնելու ժամկետները:»:

3. Հավելված 1-ում լրացնել ենթահավելված 38-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով հաստատվող 68.3 կետով նախատեսված փաստաթղթերը: Կենտրոնական բանկը բանկի կողմից սույն կետի համաձայն բոլոր փաստաթղթերը ներկայացնելու դեպքում դիլերի որակավորման վկայականը տրամադրում է 30 օրվա ընթացքում:

5. Կանոնակարգ 1-ի 56-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) բանկի մասնաճյուղի կառավարիչ (բացառությամբ սույն կանոնակարգի 21.1-րդ կետի 1-4 ենթակետերը բավարարող բանկի մասնաճյուղի կառավարչի),

5) բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ (բացառությամբ սույն կանոնակարգի 21.1-րդ կետի 1-4 ենթակետերը բավարարող բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի):»:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո՝ բացառությամբ սույն որոշման 5-րդ կետի և սույն որոշմամբ հաստատվող 68.2 կետի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
25 փետրվարի 2013 թ., N 41Ա

Հավելված

Ենթահավելված 38

ԲԱՆԿԻ ԴԻԼԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ես՝ _____, սույնով հավաստիացնում եմ, որ.

1. չունեմ դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար,
2. դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված չեմ,
3. սնանկ ճանաչված չեմ և չունեմ չմարված (չներված) պարտավորություններ,
4. քրեական գործով ներգրավված չեմ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

Պարտավորվում եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Բանկի դիլերի պաշտոնում
աշխատելու համար ներկայացված
ղեկավարի թեկնածուի ստորագրություն _____

Ամսաթիվ _____

ԱՊՊԱ պատահարի գծով ապահովագրական հատուցման դիմում ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [*]

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացվում են բազմաթիվ հարցումներ, որոնցով խնդրվում է պարզաբանել, թե այս կամ այն դեպքում ապահովագրական հատուցման դիմում ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի բաց թողումը կարո՞ղ է, արդյոք, հարգելի ճանաչվել և տրամադրվել ապահովագրական հատուցում:

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին հասցեագրված հարցումներում բարձրացված խնդիրները,

հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խնդիրներից է ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,

նպատակ ունենալով հստակեցնել ապահովագրական հատուցման դիմում ներկայացնելու գործընթացը և կանխարգելել ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական հատուցման դիմումի անհիմն մերժման դեպքերը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «զ» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***պարզաբանում է.***

1. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրական հատուցում ստանալու համար տուժողը կամ նրա իրավահաջորդը իրավունք ունի ապահովագրական պատահարի օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում, դիմելու վնաս պատճառած անձի պատասխանատվությունն ապահովագրած ապահովագրական ընկերությանը կամ Բյուրոյին: Միևնույն ժամանակ, այդ նույն հոդվածը հնարավոր է համարում որոշ դեպքերում եռամսյա ժամկետի հաշվարկը սկսել ոչ թե պատահարի օրվանից, այլ՝ ավելի ուշ: Մասնավորապես, այդպիսի հիմքերից մեկն այն է, երբ տուժողը կամ նրա իրավահաջորդը ապահովագրական հատուցում ստանալու համար չի դիմում պատահարի հետևանքով այնպիսի իրավիճակում լինելու պատճառով, որ անհնարին է դարձրել տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից ապահովագրական ընկերությանը սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելը: Նման դեպքերում տուժողի կամ նրա իրավահաջորդի համար եռամսյա ժամկետը սկսում է գործել ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելն անհնարին դարձնող հանգամանքների վերացման օրվանից սկսած:

2. Ի թիվս այլոց՝ որպես սույն պարզաբանման 1-ին կետով նախատեսված տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից ապահովագրական ընկերությանը սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելն անհնարին դարձնող հանգամանք, պետք է դիտել նաև այն դեպքերը, երբ տվյալ անձի համար ապահովագրական հատուցման իրավունքի ծագումը կապված է ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո օրենքով նախատեսված որոշակի հանգամանքների ի հայտ գալու կամ չգալու հետ, կամ երբ նման իրավունք ունենալու փաստն իրավաբանորեն հաստակեցվելու է ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո տվյալ կամ երրորդ անձի՝ օրենքով նախատեսված գործողության (անգործության) կամ որոշման հիման վրա:

3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ տուժող են համարվում նաև տուժողի մահվան դեպքում օրենքի համաձայն վնասների հատուցման իրավունք ունեցող անձինք:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածը ի թիվս այլոց՝ տուժողի (կերակրողի) մահվան դեպքում վնասի հատուցման իրավունք ունեցող անձանց շարքում նշում է

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. մարտի 22-ին (ՀՀՊՏ N11 (455), 9.04.2013):

նաև մահացածի մահվանից հետո ծնված նրա երեխային, ինչպես նաև մահացածի խնամքի ներքո գտնվող և նրա մահվանից հետո հինգ տարվա ընթացքում անաշխատունակ դարձած անձանց: Նշված անձինք փաստորեն տուժողի կարգավիճակ են ստանում և վնասների հատուցման իրավունք ձեռք բերում տուժողի մահվանից (ապահովագրական պատահարից) ավելի ուշ՝ համապատասխանաբար՝ երեխայի ծնվելու կամ անաշխատունակ ճանաչվելու օրվանից:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 78-րդ գլխի համաձայն՝ ժառանգությունը ձևակերպվում է նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագիր տալու միջոցով: Ընդ որում, ժառանգության իրավունքի վկայագիրը ժառանգներին է տրվում ժառանգության բացման (մեր դեպքում՝ տուժողի մահվան) օրվանից վեց ամիս հետո՝ բացառությամբ օրենսգրքով նախատեսված դեպքերի: Փաստորեն մինչ այդ օրը ժառանգը չի կարող հստակ իմանալ, որ ինքը տուժողի իրավահաջորդն է և, հետևաբար, իրավունք ունի ստանալու տուժողին վճարման ենթակա ապահովագրական հատուցումը:

6. Ելնելով սույն պարզաբանման 1-5-րդ կետերով նախատեսված դրույթներից՝

1) Տուժողի մահվանից հետո ծնված նրա երեխայի համար որպես կերակրողին կորցրած անձ ապահովագրական հատուցում ստանալու դիմում ներկայացնելու եռամսյա ժամկետի հաշվարկը պետք է սկսել երեխայի ծնվելու օրվանից,
2) Տուժողի խնամքի ներքո գտնվող և նրա մահվանից հետո 5 տարվա ընթացքում անաշխատունակ դարձած անձի համար որպես կերակրողին կորցրած անձ ապահովագրական հատուցում ստանալու դիմում ներկայացնելու եռամսյա ժամկետի հաշվարկը պետք է սկսել այդ անձին անաշխատունակ ճանաչելու օրվանից,
3) Տուժողի իրավահաջորդի համար ապահովագրական հատուցում ստանալու դիմում ներկայացնելու եռամսյա ժամկետի հաշվարկը պետք է սկսել համապատասխան ժառանգության վկայագիրը ստանալու օրվանից, իսկ ժառանգության վկայագիրը ստանալու նպատակով դիմում ներկայացնելու համար օրենսդրությամբ նախատեսված ժամկետում համապատասխան դիմում չներկայացնելու դեպքում՝ այդ ժամկետի վերջին օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 մարտի 2013 թ., N1

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՐՏ 2013)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու թ յ Ու Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 15

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 18

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 23

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 24

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 34

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 51
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 62
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 64
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 70
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2013թ. փետրվար*	*2013թ. փետրվարի իրական աճի հնդեքսը 2012թ. փետրվարի նկատմամբ (%)*	*2013թ. մարտ*	*2013թ. մարտի իրական աճի հնդեքսը 2012թ. մարտի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	108.8[1]	-	108.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	93167.9	113.3	99722.3	115.4
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	731.7	95.3	674.2	96.2
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	21019.7	102.3	26140.1	102.4
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	142400.7	107.5	162585.3	106.1
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	10915.0	99.6	20750.6	92.7
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	70251.8	108.1	78791.2	105.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	140749	101.1	145812	100.8

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2013թ.	*Սպառողական գների հնդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների հնդեքս*	*Գների հնդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հնդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.9	102.0	100.3	100.1
Փետրվար	99.6	98.4	101.0	100.3
Մարտ	100.4	99.3	101.5	99.6
2013 թ. հունվար - մարտը 2012 թ. հունվար - մարտի համեմատությամբ	103.0	107.4	102.3	88.2

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2011*	*2012*	*2013*	*2013*	*2013*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	3.4 [2]	3.6	2.9	2.9	2.6
Փետրվար	0.9 [2]	-0.9	-0.4	2.5	3.1
Մարտ	0.8	0.1	0.4	2.9	3.4
Ապրիլ	-0.2	-0.6			
Մայիս	0.0	-1.3			
Հունիս	-1.4	-1.3			
Հուլիս	-3.0	-1.5			
Օգոստոս	-0.6	-0.4			
Սեպտեմբեր	0.8	0.8			
Հոկտեմբեր	0.3	1.2			
Նոյեմբեր	1.2	1.4			
Դեկտեմբեր	2.5	2.1			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	4.7	3.2			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	7.7	2.6			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2013թ. մարտը 2013 թ. փետրվարի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**100.4**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**100.4**	**0.23**
Միրգ	104.0	0.15
Ձու	106.0	0.08
Հացամթերք	100.6	0.07
Կենդանական և բուսական յուղեր	101.1	0.04
Կաթնամթերք	100.7	0.03
Հրուշակեղեն	101.5	0.03
Բանջարեղեն և կարտոֆիլ	97.3	-0.17
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.8**	**0.13**
Կոշկեղեն	103.4	0.06
Գեղահարդարման ապրանքներ	101.3	0.03
Հագուստ և գործվածք	100.7	0.02
Մշակույթի ապրանքներ	97.3	-0.01
Ծառայություններ, որից՝	**100.2**	**0.06**
Բուժսպասարկման	101.3	0.05
Հանգստի կազմակերպման	103.0	0.02
Բնակարանային, կոմունալ	100.1	0.01
Տրանսպորտի	99.0	-0.03

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[3]

ժամանակաշրջան	2010	2011	2012	2013
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.48	0.71[4]	0.65	0.79
Փետրվար	0.74	0.42[4]	0.08	0.21
Մարտ	0.82	0.64[4]	0.04	0.53
Ապրիլ	0.70	0.45[4]	0.02	
Մայիս	0.04	0.32[4]	-0.16	
Հունիս	-0.22	0.37[4]	0.35	
Հուլիս	-0.42	0.21[4]	0.14	
Օգոստոս	0.17	0.27[4]	-0.06	
Սեպտեմբեր	0.63	0.42[4]	0.67	
Հոկտեմբեր	1.21	0.36[4]	0.73	
Նոյեմբեր	1.18	0.41	0.37	
Դեկտեմբեր	0.63	0.55	0.58	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	6.20	6.28[4]	5.27	3.63
Փետրվար	7.59	5.75[4]	4.91	3.73
Մարտ	7.14	5.68[4]	4.27	4.20
Ապրիլ	6.35	5.42[4]	3.81	
Մայիս	5.92	5.75[4]	3.30	
Հունիս	5.40	6.32[4]	3.26	
Հուլիս	5.16	6.95[4]	3.19	
Օգոստոս	4.96	7.01[4]	2.85	
Սեպտեմբեր	4.86	7.01[4]	3.10	
Հոկտեմբեր	5.53	6.09[4]	3.48	
Նոյեմբեր	6.16	5.37	3.47	
Դեկտեմբեր	6.26	5.29	3.50	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**4.20**
Ալյուր բարձր տեսակի	0.40
Հավի բուդ	0.28
Չու	0.21
Ծառայություններ ատամնաբուժական, ատամների բուժման	0.17
Բուսական յուղ (արևածաղկի)	0.15
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.15
Ծառայություններ կենցաղային ապրանքների վարձակալության	0.13
Ծխախոտ «Գառնի»	0.13
Թռչնի միս	0.12
Մակարոն	0.11
Եփած երշիկ	0.10
Ծխախոտ «Ախթամար»	0.09
Բջջային հեռախոսի պայմանագրային րոպեավճար	-0.09
Բջջային հեռախոսի կանխավճարային րոպեավճար	-0.12
Շաքարավազ	-0.14

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

[3] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[4] Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2013 թ. հունվար - փետրվարը (մլն ԱՄՆ դոլար)*	*2013 թ. հունվար - փետրվարը 2012 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*	*2013 թ. հունվար - մարտը (մլն ԱՄՆ դոլար)*	*2013 թ. հունվար - մարտը 2012 թ. հունվար - մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	241.3	130.4	341.7	114.3
Ներմուծում *(ՍԻՖ)*	645.9	108.9	972.5	102.0
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	404.6	99.2	630.8	96.4

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Հունվար - մարտ			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	251133	42056	209077	1644850	251163	1393686
ԱՄՆ	30080	27004	3076	127681	115347	12334
Ուկրաինա	4200	3792	408	20783	21114	-331
Ղազախստան	5607	359	5249	26427	1734	24694
Գերմանիա	6213	8867	-2654	26847	33177	-6330
Իսպանիա	1735	1913	-178	7534	11186	-3651
Ֆրանսիա	3901	4376	-475	19917	25268	-5351
ԱՄԷ	2775	12429	-9654	23392	53989	-30597
Չինաստան	860	13576	-12716	7108	82770	-75662
Թուրքիա	1023	7093	-6069	3799	31221	-27421
Այլ երկրներ	62328	45525	16804	329130	235711	93420
Ընդամենը	**369856**	**166989**	**202867**	**2237468**	**862679**	**1374789**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2013 թվական					
	Մարտ			Հունվար-մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	104335	16892	87443	279946	57054	222892
ԱՄՆ	15237	9989	5248	32379	32748	-369
Ուկրաինա	1704	2401	-698	4216	5277	-1060
Ղազախստան	2734	128	2607	6090	477	5613
Գերմանիա	1803	3773	-1971	5291	8924	-3633
Իսպանիա	582	580	2	1696	2341	-645
Ֆրանսիա	1359	2279	-919	3938	5926	-1988
ԱՄԷ	1525	3804	-2279	4361	10080	-5719
Չինաստան	137	7412	-7276	1153	16895	-15743
Թուրքիա	472	1952	-1480	998	5852	-4854
Այլ երկրներ	27431	14092	13340	80045	44290	35754
Ընդամենը	**157318**	**63301**	**94017**	**420112**	**189864**	**230248**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Հունվար - մարտ			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	224651	32573	192078	1444955	164588	1280367
ԱՄՆ	18547	6268	12279	66554	25936	40617
Ուկրաինա	3833	2945	888	19094	15397	3698
Ղազախստան	3804	347	3457	22532	1575	20957
Գերմանիա	2526	2250	276	11827	7962	3866
Իսպանիա	1584	582	1001	6315	3842	2473
Ֆրանսիա	2530	1190	1340	12089	5292	6797
ԱՄԷ	838	1542	-705	7596	7309	287
Չինաստան	96	2117	-2021	2967	10646	-7679
Թուրքիա	460	820	-360	1615	4209	-2593
Այլ երկրներ	18363	10263	8100	91717	45493	46224
Ընդամենը	**277232**	**60898**	**216334**	**1687263**	**292249**	**1395014**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2013 թվական					
	Մարտ			Հունվար-մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	96342	14172	82170	246798	38311	208487
ԱՄՆ	7155	2949	4205	17291	8591	8700
Ուկրաինա	1558	1109	449	3797	3027	771
Ղազախստան	2404	128	2276	5446	356	5089
Գերմանիա	1277	492	785	3038	1671	1367
Իսպանիա	464	266	198	1314	896	418
Ֆրանսիա	1053	484	570	2985	1218	1767
ԱՄԷ	299	679	-380	1239	1907	-668
Չինաստան	121	1158	-1038	393	2147	-1754
Թուրքիա	246	158	88	470	769	-300
Այլ երկրներ	7936	4091	3845	22697	11350	11346
Ընդամենը	**118855**	**25687**	**93168**	**305468**	**70243**	**235225**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ԻՆԴԵՔՍ) [1,2]

2012	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	133.1	128.6	127.3	122.6	124.0	120.3	119.4	118.1	117.0	117.7	119.6	120.6
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	218.3	214.0	213.7	207.5	212.7	208.8	210.8	210.4	208.2	208.1	209.2	207.7
2013	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	123.1	121.7	122.0									
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	205.9	205.4	204.9									

[1] 2013 թ. հունվարին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկի մեջ ընդգրկվել են 12 (նախկինում 11) գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով (նախկինում 2003-2007 թթ.), 1997=100:

[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ նախնական գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար


Ցուցանիշներ	2012	2013		
	Դ [3]	Հ	Փ	Մ [4]
Համախառն միջազգային պահուստներ	**1799.4**	**1768.0**	**1771.6**	**1631.4**
Ոսկի	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	31.7	31.8	21.6	1.7
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0
Արտարժույթ [2]	1767.7	1736.2	1749.9	1629.7

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[4] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2012	2013		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**731.6**	**735.8**	**721.6**	**679.1**
ԱՄՀ վարկ	464.3	466.0	454.5	414.9
ՀՓԻ տեղաբաշխում	135.2	135.6	134.8	131.9
Այլ վարկեր	131.8	134.1	132.2	132.1
Այլ պարտավորություններ	0.3	0.1	0.1	0.1

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:


[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Կենտրոնական բանկի	Ընդամենը	Կենտրոնական բանկի արտարժութային միջոցներ և արտարժութային պարտավորություններ	Կենտրոնական բանկի դրամային միջոցներ և դրամային պարտավորություններ	ՀՀ կառավարության դրամային միջոցներ	Այլ դրամային միջոցներ	Ընդամենը	
2012								
Դեկտեմբեր	15940	15940	106563	2146	1	572	109283	**-93342**
2013								
Հունվար	15784	15784	143768	2195	0	577	146540	**-130755**
Փետրվար	14383	14383	133612	2161	0	580	136353	**-121970**
Մարտ	12888	12888	114893	1894	0	594	117381	**-104493**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] *(մլն ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլն ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ դրամով *(մլն ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլն ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ դրամով *(մլն ՀՀ դրամ)*	M2 [3] *(մլն ՀՀ դրամ)*	Արտարժութային ավանդներ *(մլն ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլն ՀՀ դրամ)*	Փողի բազայի [5] հակադրում	Դրամային զանգվածի [6] հակադրում
2012										
Դեկտեմբեր	683846	384065	161727	545793	192190	737983	608382	1346365	1.97	1.23
2013										
Հունվար	655927	351781	156998	508779	200378	709158	610987	1320145	2.01	1.22
Փետրվար	679554	342222	168718	510940	202542	713481	633431	1346912	1.98	1.22
Մարտ	645019	344020	158137	502157	211289	713446	650421	1363867	2.11	1.27

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
700000
600000
500000
400000
300000
200000
100000
0
09
10
11
12
13
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
09
10
11
12
13
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
20
06
07
08
09
10
11
12
13


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
70
65
60
55
50
45
06
07
08
09
10
11
12
13


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2012					
Դեկտեմբեր	617342	360707	512404	705716	1305151
2013					
Հունվար	662640	362484	517741	718184	1318291
Փետրվար	614118	360681	512785	704347	1303694
Մարտ	669943	359772	520405	722906	1364359

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2012	2013		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
(Մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***418075***	***403117***	***418057***	***380279***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***265771***	***252810***	***261498***	***264739***
Կառավարություն	-93342	-130755	-121970	-104493
Բանկեր	152943	175166	168021	153035
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	71582	69550	61442	66548
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	-25009	0	0	-21004
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	206170	208398	215447	216197
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***683846***	***655927***	***679554***	***645019***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	440117	400669	397751	395633
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	154525	175808	183424	161970
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	86033	73547	93138	84366
Այլ հաշիվներ	3171	5903	5241	3050
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	3162	5900	5218	3047
Այլ հաշիվներ արտարժույթով	9	3	23	3
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-14958***	***14939***	***-37777***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-12961***	***8688***	***3242***
Կառավարություն	-	-37413	8785	17478
Բանկեր	-	22223	-7145	-14986
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-2032	-8108	5106
Դրամական միջոցների ներգրավում (-)	-	-25009	0	21004
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	-	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	2229	7048	750
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-27919***	***23628***	***-34536***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-39448	-2918	-2119
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	21283	7616	-21454
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-12486	19591	-8771
Այլ հաշիվներ	-	2732	-661	-2192
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	2738	-682	-2171
Այլ հաշիվներ արտարժույթով	-	-6	20	-20
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	-	***-3.6***	***3.7***	***-9.0***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-4.9***	***3.4***	***1.2***
Կառավարություն	-	-40.1	6.7	14.3
Բանկեր	-	14.5	-4.1	-8.9
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	1.1	3.4	0.3
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	***-4.1***	***3.6***	***-5.1***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-9.0	-0.7	-0.5
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	13.8	4.3	-11.7
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-14.5	26.6	-9.4
Այլ հաշիվներ	-	86.1	-11.2	-41.8

[1] Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2012	2013		
	Դ	Հ	Փ	Մ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-555464**	**-565495**	**-581574**	**-535599**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	187731	217653	197478	251126
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-680228	-721001	-714208	-724619
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-62967	-62146	-64844	-62107
ԶՆԱ	**1514994**	**1527708**	**1583259**	**1550898**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	110373	107899	107527	109518
Պահանջներ Կառավարության նկատմամբ	178815	177017	175150	176427
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-68442	-69118	-67624	-66909
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	164678	145170	186447	167301
Պահանջներ ԿԲ նկատմամբ	320789	297911	331681	318496
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-156111	-152741	-145234	-151195
Ներդրումներ	1586532	1603526	1634722	1618249
Ջեռնարկություններ	954550	968470	991781	948043
Դրամով	161012	160387	156783	155485
Արտարժույթով	790525	804459	830878	788823
Արժեթղթեր	3012	3624	4121	3735
Տնային տնտեսություններ	568802	572903	579033	603266
Դրամով	379946	382833	384984	397046
Արտարժույթով	188856	190070	194050	206220
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	31222	29387	28286	29705
Դրամով	4195	2992	3474	4613
Արտարժույթով	27027	26395	24813	25091
Այլ ֆինանսական կազմակերպություններ	31958	32766	35621	37235
Դրամով	22269	23770	26122	27295
Արտարժույթով	9690	8996	9499	9940
Զուտ այլ ակտիվներ	-346590	-328886	-345437	-344170
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	23808	33956	33126	31712
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	629	569	572	640
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	-12	-21	-314	-41
Ներդրումներ փայաբաժիններում	2755	2663	2674	2673
Միջբանկային պահանջներ	55569	47450	54136	55259
Այլ ակտիվներ	151733	150982	155787	159568
Միջբանկային պարտավորություններ (-)	-55674	-47547	-53963	-54884
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-667	-659	-667	-682
Կապիտալ հաշիվներ (-)	-397761	-394790	-395176	-409740
Այլ պարտավորություններ (-)	-126970	-121489	-141614	-128675
ԱՎԱՆԴՆԵՐ	**959529**	**962213**	**1001685**	**1015299**
Դրամով ավանդներ	352731	353992	370611	369652
Ցպահանջ ավանդներ	159328	153307	164936	156019
Ժամկետային ավանդներ	193404	200685	205675	213633
Արտարժույթով ավանդներ	606798	608221	631074	645647
Ցպահանջ ավանդներ	149085	137719	145482	138788
Ժամկետային ավանդներ	457713	470502	485593	506859

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2012	2013		
	Դ	Հ	Փ	Մ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-48014**	**-47105**	**-47401**	**-47292**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	981	1163	1022	1190
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-35880	-35127	-36098	-36840
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-13115	-13141	-12325	-11643
ԶՆԱ	**67178**	**67640**	**68235**	**69064**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-7655	-7807	-7940	-8150
Պահանջներ Կառավարության նկատմամբ	2455	2350	2653	2887
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-10110	-10157	-10593	-11037
Զուտ պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	25680	26380	28596	24928
